ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-854-03.06.2024-ՊԻ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծն (փաստաթղթային կոդ՝ Կ-854-03.06.2024-ՊԻ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող նոր կառույցի, այն է՝ բուժական քրեակատարողական հիմնարկի վերաբերյալ կարգավորումներ: Նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքի 57-րդ հոդվածում լրացվող նոր՝ 4-րդ մասով սահմանվում է, որ հիվանդանոցային պայմաններում երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի կարիք ունեցող դատապարտյալները տեղափոխվում են բուժական քրեակատարողական հիմնարկ: Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքի 91-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվող լրացման արդյունքում սահմանվում է. «Դատապարտյալների արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում են մասնագիտացված կազմակերպության՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված՝ համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական ստորաբաժանումները, բուժական քրեակատարողական հիմնարկը (…)»: Վերոգրյալի համաձայն՝ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենսգրքում կատարվող լրացման արդյունքում սահմանվում է, որ բուժական քրեակատարողական հիմնարկն իրականացնում է միայն հիվանդանոցային պայմաններում երկարատև բժշկական օգնություն, սպասարկում և խնամք, իսկ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքում կատարվող լրացման արդյունքում սահմանվում է, որ բուժական քրեակատարողական հիմնարկն իրականացնում է արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում ցանկացած, այլ ոչ միայն երկարատև, բժշկական օգնություն և սպասարկում: Վերջին պնդումը հաստատվում է նաև Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվող լրացմամբ, ինչի արդյունքում սահմանվում է. «Բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտության դեպքում դատապարտյալը տեղափոխվում է համապատասխան քրեակատարողական հիմնարկում տեղակայված բժշկական ստորաբաժանում կամ բուժական քրեակատարողական հիմնարկ»: Վերոգրյալ դիտարկումներից բխում է, որ Նախագծի 2-րդ

հոդվածով Օրենսգրքում կատարվող լրացումը հակասում է Նախագծի 3-րդ և 5-րդ հոդվածներով Օրենսգրքում կատարվող լրացումներին:

Միաժամանակ նշենք, որ Նախագծի 3-րդ հոդվածով Օրենսգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասում և Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքի 91-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվող լրացումների արդյունքում բուժական քրեակատարողական հիմնարկի և մասնագիտացված կազմակերպության՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված՝ համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառույթների շրջանակը նույնացվում է, հետևաբար հասկանալի չէ, թե որ դեպքում են դատապարտյալները տեղափոխվում բուժական քրեակատարողական հիմնարկ, և որ դեպքում՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված բժշկական ստորաբաժանում: Առաջարկում ենք վերոնշյալի հիման վրա քննարկվող նորմերում կատարել համապատասխան հստակեցում:

Նշենք նաև, որ Նախագծի անցումային դրույթներով սահմանված չէ բուժական քրեակատարողական հիմնարկի ստեղծման և գործունեություն ծավալելու ժամկետ:

2. Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագիծը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր չի պարունակում:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված դիտարկումների հիման վրա ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների հստակությունը, դրանց համապատասխանությունը միմյանց և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջին:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ
Կատարող՝ Ա. Ղազարյան (հեռ.՝ 011-513-248)
17.06.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ
Կատարող՝ Ա. Ղազարյան (հեռ.՝ 011-513-248)
17.06.2024թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է Օրենսգրքում սահմանել լիազորող նորմ, որը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով առավել մանրամասն սահմանել դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատման կարգը և պայմանները: Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման պատշաճ կազմակերպման համար նպատակահարմար է համարվել Արդարադատության նախարարության

քրեակատարողական ծառայությունում ունենալ առանձին քրեակատարողական հիմնարկ, որտեղ պատիժ կկրեն հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության, խնամքի և սպասարկման կարիք ունեցող ազատազրկման դատապարտված անձինք: Նախատեսվում է, որ բուժական քրեակատարողական հիմնարկում պահվելու են ինչպես հիվանդանոցային բուժման և խնամքի կարիք ունեցող, այնպես էլ վարակիչ կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններ ունեցող դատապարտյալները:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ, որպես այդպիսիք, չի պարունակում, սակայն հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող լրացման տեքստի «դատապարտյալի ռիսկեր» հասկացության վրա, որը ոչ միայն անորոշ է, այլև մասնագիտական առումով՝ ոչ ճիշտ: Մասնավորապես, անորոշության առումով անհասկանալի է, թե ո՞ր ռիսկերի մասին է խոսքը՝ առողջապահական, ֆինանսական, անվտանգային, թե՞ որևէ այլ: Հետևաբար՝ եթե խոսքը չի գնում բոլոր տեսակի ռիսկերի մասին (ինչը քիչ հավանական է՝ կապված այս հասկացության գրեթե անսամանափակ շրջանակի հետ), ապա անհրաժեշտ է հստակեցնել, թե դատապարտյալների ո՞ր տեսակի կամ շրջանակի ռիսկերի մասին է խոսքը: Երկրորդ՝ խնդիրը կայանում է նրանում, որ «ռիսկը», որպես հասկացություն, իրենից որոշակի երևույթ կամ իրավիճակ է ներկայացնում, որը կախված չէ մարդու կամքից և ամբողջությամբ անորոշ է, հետևաբար՝ դատապարտյալը, որպես մարդ, չի կարող ունենալ որևէ տեսակի ռիսկ, նա կարող է ենթակա լինել ռիսկի ազդեցության, կրել ռիսկերի հետևանքները և այլն, բայց չի կարող ունենալ որևէ բան, որն ամբողջությամբ անորոշ է: Նշվածը, կարծում ենք, ակնհայտ է նաև «ռիսկ» հասկացության նույնիսկ ամենատարրական սահմանումներից, ըստ որոնց՝ ռիսկը.

- արժեքի չկառավարվող վնասի պոտենցյալն է,

- ազդեցություն է, որը ներգործում է ռազմավարության վրա խթանի կամ բարձր որակի տրանսֆորմացիան զսպող պայմանի շնորհիվ,

- անորոշ իրադարձություն է կամ անորոշ պայման է, որի տեղի ունենալու պարագայում ունի առնվազն մեկ օբյեկտի վրա ազդեցություն,

- ինչ որ բանի տեղի ունենալու հավանականության և այդ նույն բանի հնարավոր վնասի կամ հնարավոր օգուտի արժեքի արտադրյալն է,

- հաշվելի սպառնացող վնասի, վնասվածքի, պատասխանատվության, վնասի կամ այլ արտաքին կամ ներքին խոցելիությունից պատճառված բացասական դեպքի տեղի ունենալու հավանականությունն է և այլն:

Այս կապակցությամբ առաջարկում ենք հստակեցնել Նախագծում օգտագործվող «դատապարտյալի ռիսկեր» հասկացությունը, մասնավորապես՝ հաշվի առնելով Նախագծի ամբողջ տեքստի բովանդակությունը (կապված հիվանդանոցային պայմաններում երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի կարիք ունեցող դատապարտյալներին բուժական քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու օրենսդրական հիմքերի ամրագրման հետ), առաջարկում ենք «դատապարտյալի ռիսկեր» հասկացությունը փոխարինել «դատապարտյալի կյանքին սպառնացող առողջական ռիսկեր» հասկացությամբ:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի, սակայն Նախագծում օգտագործվող «դատապարտյալի ռիսկեր» հասկացությունը հստակեցման կարիք ունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱՉՅԱՆ
(հեռ.՝ 011 513-668)
07.06.2024թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

ՀՀ կառավարության կողմից ներկայացված նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է լրացումներ և փոփոխություն կատարել «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում» (այսուհետ՝ Օրենսգիրք), ըստ որի, առաջարկվում է

սահմանել լիազորող նորմ, ինչը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով առավել մանրամասն սահմանել դատապարտյալի ռիսկերի և կարիքների գնահատման կարգն ու պայմանները:

Մասնավորապես, ներկայացված Նախագծով, հեղինակն առաջարկում է քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման պատշաճ կազմակերպման համար, Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունում ստեղծել առանձին քրեակատարողական հիմնարկ, որտեղ պատիժ կկրեն հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության, խնամքի և սպասարկման կարիք ունեցող ազատազրկման դատապարտված անձինք (պահվելու են բուժման և խնամքի կարիք ունեցող, վարակիչ կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններ ունեցող դատապարտյալները): Իրականացվելու են նաև որոշակի վիրահատական միջամտություններ, տուբերկուլոզի կամ այլ վարակիչ հիվանդությունների, անձի խանգարումների, օրգանական հոգեկան սինդրոմների և այլ հիվանդությունների ստացիոնար բուժում և խնամք:

Նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

Եզրահանգում

Նախագծի ընդունման արդյունքում հեղինակն ակնկալում է ազատազրկման դատապարտված անձանց բժշկական օգնության և սպասարկման պատշաճ կազմակերպում:

Նախագծով առաջարկվող լրացումների ընդունումը առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից կունենա դրական ազդեցություն:

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. Մարկոսյան

Կատարող՝ Ա. Գալստյան (հեռ. 011-513-235), (12-35)

07.06.2024թ.